ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

Փետրվարի 28-ին, Ս. Վարդանանց տոնի օրը, Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի անվանակոչության տոնն էր։

Այս ուրախ առթիվ ստացվեցին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր, նամակներ, ուղերձներ Մայր Աթոռի հավերժության և անսասանության, Հայ Եկեղեցու պայծառության և Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արևշատության, առողջության և արդյունավետ գործունեության անկեղծ ու սրտագին մաղթանքներով։

Վեհափառ Հայրապետի հրամանով և նրա անունից, Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ ստացված շնորհավորական նամակների, գրությունների և հեռագրերի համար։

Հրատարակում ենք միայն Թյուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի և Երուսաղեմի Հայոց Պատրիարքական տեղապահ Ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի շնորհավորական հեռագրերը։

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհիդ անվանակոչության առթիվ ընդունեցեք մեր և Ձեր բոլոր հոգևոր զավակաց սրտագին շնորհավորանքն ու մաղթանքները Ձեր թանկագին կյանքին բաջառողջության, արևշատության և Ձեր եկեղեցանվեր բոլոր ձեռնարկներուն հաջողության համար։

ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր միաբանության և ժողովրդի կողմեն հարգալից շնորհավորություններ Ձերդ Ս. Օծության անվանակոչության տոնին առթիվ։ Աղոթեցինք ամենափրկիչ Տիրոջ, որպեսզի Ձեզ շնորհեն երկար և արդյունավոր կյանք և Ձեզ ու Մայր Աթոռը պահեն իր հովանիին ներքև։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ